



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13 նոյեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/2

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆՏՏԱՇՐՁԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը, Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Հայկ Մարգարյանը, Սերգեյ Հարությունյանը և Գևորգ Բաբայանը ներկայացրել են դիմումներ ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի **06.11.2018թ.** արձանագրությունների համաձայն՝ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Լուսինե Գևորգյանին, Լիլիթ Կիրակոսյանին, Արմեն Մարգարյանին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2018** թվականի նոյեմբերի **13**-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու **1**-ին նստաշրջանի **2**-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու **2017** թվականի դեկտեմբերի **26**-ի **N98**-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու **2010** թվականի մայիսի **7**-ի **N96**-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:
5. Երևանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատված համարելու մասին:
6. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
7. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
8. «Եվրոպա հյուրանոց» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
9. Հողամաս նվիրելու մասին:
10. Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 48 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**2. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N98-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Վարդանյան Ընտանիք» բարեգործական հիմնադրամի նվիրաբերության առաջարկին հավանություն տալու մասին» N 98-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «2018 թվականի սեպտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «2019 թվականի մայիսի 1-ին» բառերով:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**3. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N96-Ն որոշման

1-ին կետում «43.1 հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով» բառերը փոխարինել «43.1 հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով» բառերով:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**4. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Հաստատել՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 55 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**5. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատված համարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատված համարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Հաստատված համարել Երևանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 56 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

**6. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Գայանե Արրահամյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Գայանե Վարդանյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Աշոտ Մնացականյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու **9** անդամ

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Ռուբեն Հայրապետյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Էռնեստ Ավանետով - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

4. Իզաբելա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
6. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Արման Աբովյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

**8.** Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

**9.** Սերգեյ Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ա. Մեսյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Սուլդովական փողոցի հ.29/4 շենքի հ.18՝ 34.6քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **31.01.2018թ. հ.31012018-01-0118** վկայական) անհատույց օգտագործման իրավունքով, **10** տարի ժամկետով տրամադրել Վիրաբ Ավետիքի Շաբոյանին, Աննա Գրիգորի Ասլանյանին, Վարդիթեր Վիրաբի Շաբոյանին, Սաթենիկ Վիրաբի Շաբոյանին, Մանե Վիրաբի Շաբոյանին, Նարե Վիրաբի Շաբոյանին, Հակոբ Վիրաբի Շաբոյանին, Սողոմոն Վիրաբի Շաբոյանին, Էռնեստ Վիրաբի Շաբոյանին, Մանուկ Վիրաբի Շաբոյանին, Անի Վիրաբի Շաբոյանին, Միլենա Վիրաբի Շաբոյանին, Մարիա Վիրաբի Շաբոյանին, Մոնթե Վիրաբի Շաբոյանին, Ավետիք Վիրաբի Շաբոյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **57** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **56**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**7. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

**1.** Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**2.** Գայանե Աբրահամյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**3.** Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑՅՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի **հ.61** և Շահամիրյանների փողոցի **հ.4** հասցեներում գտնվող համապատասխանաբար **10702.09**քմ և **5340.0**քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

**2.** Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման **1**-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին **10**-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**3.** Ընդունել ի գիտություն, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրամադրված եզրակացությանը կից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթի, քաղաքաշինական փաստաթղթերը տրամադրելիս անհրաժեշտ է ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և նախագիծը համաձայնեցնել առողջապահության նախարարության հետ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **57** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **56**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **1**

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**8. ԼՍԵՑԻՆ** - «Եվրոպա հյուրանոց» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու **8** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

**1.** Արման Աբովյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

**2.** Ալեքսանդր Ավետիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**3.** Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ  
5. Հոփիսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

6. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ  
7. Իգարելյա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ  
8. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի մասին պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Եվրոպա հյուրանոց» փակ բաժնետիրական ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Արման Աբովյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Ա. Աբովյանը և Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Թույլատրել «Եվրոպա հյուրանոց» ՓԲԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 57 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` 36, դեմ` 9, ձեռնպահ` 12

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**ԸՆԴՄԻՋՈՒՄ.**

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

**9. ԼՍԵՑԻՆ** - Հողամաս նվիրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Արթուր Իսպիրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամաս նվիրելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Արման Աբովյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոցի հ.74 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **02.07.2018**թ. N **02072018-01-0248** վկայական), **135.720.000** դրամ կադաստրային արժեք ունեցող, **3** հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ **01-008-0506-0108**) նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **50** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **50**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**10. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու **4** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

**1.** Դավիթ Խաչատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**2.** Նարինե Խաչատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**3.** Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

**4.** Դավիթ Խաչատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **2** անդամ.

**1.** Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**2.** Եվա Թովմասյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ս.Մկրտչյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել է ավագանու **2** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

**1.** Սուրեն Էյրամջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

**2.** Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ. Նավասարդյանը, Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ս. Մկրտչյանը և Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ

Նիստը վերսկսվեց ժամը **15.40**-ին.

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին» ավագանու որոշման նախագիծը հանվում է քննարկումից:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել **2018** թվականի դեկտեմբերի **25**-ին, ժամը **11.00**-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /սղագրությունը կցվում է/:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**